ԹՎԻՆԻՆԳ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

AM/14/ENP/ST/15

Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում – փուլ II

ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Վիճակագրական տեղեկատվության տարածման համակարգի վերաբերյալ

Գործողություն 1.10. Պրեզենտացիոն հմտություններ և վերապատրաստման դասընթացների կազմակերպում

Առաքելությունն իրականացվել է

Դանիայի վիճակագրությունից տկն Լոունե Սլյութերի կողմից

2017թ. հունիսի 27-28-ը

Վերջնական տարբերակ

Հայաստանի ազգային
վիճակագրական ծառայություն

STATISTICS DENMARK

<u>Փորձագետի կոնտակտային տվյալներ</u>

Լոունե Սյյութեր
Դանիայի վիճակագրություն
Սեյրոգադե 11
DK-2100 Կոպենհագեն Ø
Դանիա
Հեռ. +45 39173004
Էլ-փոստ. lon@dst.dk

Բովանդակություն

1. Ընդհանուր մեկնաբանություններ 4
2. Եզրակացություններ 4
3. Առաջարկություններ 5
Հավելված 1. Տեխնիկական առաջադրանք 6
Հավելված 2. Առաքելության ծրագիր 6
Հավելված 3. Հանդիպումներին մասնակցած անձինք 9

Հապավումների ցանկ

ԵՄ	Եվրոպական միություն
ԱՎՀ	Ազգային վիճակագրական համակարգ (պաշտոնական վիճակագրություն)
ՀՀ ԱՎԾ	Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն

1. Ընդհանուր մեկնաբանություններ

Սույն առաքելության զեկույցը պատրաստվել է «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում – փուլ II» Թվինինգ ծրագրի շրջանակներում: Սա բաղադրիչ 1-ի տասներորդ գործողությունն էր, որի համար պլանավորված քայլերն իրականացվել են համաձայն ժամանակացույցի:

Առաքելության նպատակն էր.

- Պարզել, թե ինչպես ՀՀ ԱՎԾ-ն կարող է վերապատրաստել արտաքին սպառողներին Armstatbank.am-ից օգտվելու գծով
- Պարզել, թե ինչպես ՀՀ ԱՎԾ-ն կարող է կազմակերպել ներքին վերապատրաստումներ
- Բարելավել ՀՀ ԱՎԾ պրեզենտացիոն հմտությունները և հզորացնել նրանց հաղորդակցման հմտությունները

ԱԵ փորձագետն իր երախտիքն է հայտնում բոլոր պաշտոնատար անձանց և անհատներին, ում հետ հանդիպել է: Փորձագետի Հայաստանում գտնվելու ընթացքում նշված անձանց կողմից ստացված աջակցությունը և արժեքավոր տեղեկատվությունը մեծապես հեշտացրել են նրա աշխատանքը: Սույն հաշվետվության մեջ տեղ գտած տեսակետները և դիտարկումները պատկանում են խորհրդատուին և որևէ կերպով չեն արտահայտում ԵՄ, ՀՀ ԱՎԾ կամ Դանիայի վիճակագրության տեսակետները:

2. Եզրակացություններ

Կարճ առաքելության ընթացքում շատ կառուցողական քննարկումներ են իրականացվել աշխատակազմի կառավարման բաժնի հետ առ այն թե ինչպես իրականացնել ներքին վերապատրաստումներ: Տպավորությունն այնպիսին էր, որ մեծ հետաքրքրություն կա ներքին վերապատրաստումների ծրագիր ձևավորելու նկատմամբ:

Առաքելության ընթացքում նախագծվեց աշխատակազմի վերապատրաստման քաղաքականության փաստաթուղթ և տրամադրվեց աշխատակազմի կառավարման բաժնին՝ դրա մշակումը շարունակելու, այնուհետև ընդունումն ապահովելու համար:

ՀՀ ԱՎԾ-ում առաքելության ընթացքում աշխատանքներ են տարվել հետևյալ երեք թեմաների շուրջ. ինչպես վարել վերապատրաստման դասընթացներ, ինչ հաշվի առնել ներքին և արտաքին վերապատրաստում պլանավորելու ժամանակ, պրեզենտացիոն հմտություններ:
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի անդամները, ովքեր մասնակցում էին վերոնշյալ աշխատաժողովին, ցուցաբերեցին մեծ հետաքրքրություն թեմայի նկատմամբ:

3. Առաջարկություններ

ԱԵ փորձագետի կողմից առաջարկվել է, որպեսզի ՀՀ ԱՎԾ-ն մշակի աշխատակազմի վերապատրաստման քաղաքականության փաստաթուղթ առաքելության ընթացքում ներկայացված ձևի հիման վրա:
Սկզբում աշխատակազմի վերապատրաստումը կարող է ներառել 3-4 պարտադիր դասընթացներ աշխատակազմի նոր անդամների համար: Ավելի ուշ աշխատակազմի վերապատրաստման քաղաքականության փաստաթուղթը կարող է ընդլայնվել մի շարք ընտրովի դասընթացներով՝ կախված ՀՀ ԱՎԾ կարիքներից և հասանելի ներքին վերապատրաստումներից:

Փորձագետը ցանկանում է, որպեսզի ՀՀ ԱՎԾ-ն հիշի հետևյալը. լավ վերապատրաստող պատրաստելու համար պետք են մեկից ավելի վերապատրաստումներ. շատ վարժվելն այս դեպքում շատ օգտակար է:

Փորձագետը նաև նշեց, որ ներքին և արտաքին վերապատրաստման դասընթացներ սկսելուց կարևոր է ամեն անգամ իրականացված դասընթացը գնահատելը: Դասընթացի բովանդակությունը ամենակարևոր տարրն է գնահատելու համար: Այսպիսով դասընթացավարը կկարողանա հարմարեցնել դասընթացը մասնակիցների կարիքներին:

Հաջող վերապատրաստման համար նաև շատ կարևոր է, որպեսզի կազմակերպության ղեկավարությունը ժամանակ տրամադրի աշխատակիցներին վերապատրաստումներին մասնակցելու համար: Վերապատրաստման ավարտից հետո կարևոր է, որպեսզի ղեկավարությունը աշխատակիցներին ժամանակ տրամադրի իրականացնելու նոր սովորած հմտությունները աշխատանքային գործընթացներում:

Վերջապես, առաջարկվում է, որպեսզի ՀՀ ԱՎԾ-ն նաև գերակայություն տա տարածքային գրասենյակներին, որպեսզի մարզերի աշխատակիցները նույնպես ընդգրկվեն վերապատրաստման ծրագրում: Մարզերի աշխատակիցների ներգրավումը վերապատրաստման քաղաքականությունում կամրապնդի փոխկապակցվածությունը ՀՀ ԱՎԾ-ում:
Առաջարկվում է, որպեսզի մարզերում վերապատրաստումներն իրականացվեն մարզային գրասենյակներում: Արդյունքում մեկ ներքին վերապատրաստող ավելի մեծ լսարանի կարող է վերապատրաստել, ինչը առավել ծախսարդյունավետ կլինի, քանի որ այս դեպքում միայն մեկ վերապատրաստող պետք է մեկնի մարզեր՝ շատ մասնակիցների Երևան ճամփորդելու փոխարեն:

Հավելված 1. Տեխնիկական առաջադրանք

Տեխնիկական առաջադրանք

ԵՄ Թվինինգ ծրագիր AM/14/ENP/ST/15

2017թ. հունիսի 27-28-ը

Բաղադրիչ 1. Վիճակագրական տեղեկատվության տարածման համակարգ

Գործողություն. Պրեզենտացիոն հմտություններ և վերապատրաստման դասընթացների կազմակերպում

0. Առաքելության համատեքստը

Թվինինգ ծրագրի ընթացքում կազմակերպված սպառողների հետ հանդիպումները ցույց են տվել հետաքրքրություն և առավել շատ գիտելիքների կարիք, թե ինչպես տվյալներ դուրս բերել Armstatbank.am-ից: Ավելին, ծրագրի ընթացքում պարզ է դարձել, որ ՀՀ ԱՎԾ-ն կարող է օգուտ քաղել ներքին վերապատրաստումների կազմակերպումից, որոնց ժամանակ աշխատակիցները կարող են վերապատրաստել աշխատակիցներին տարբեր թեմաների գծով՝ գիտելիքների փոխանակման և հաստատությունում հասանելի փորձագիտությունն ընդլայնելու նպատակով:
Սույն առաքելությունը ընդգրկում է հետևյալ թեմաները.

- Ինչպես կարող է ՀՀ ԱՎԾ-ն վերապատրաստել արտաքին սպառողներին Armstatbank.am-ի գծով
- Ինչպես կարող է ՀՀ ԱՎԾ-ն կազմակերպել ներքին վերապատրաստում
- Պրեզենտացիոն հմտություններ և ավելի լավ հաղորդակցություն որպես վերապատրաստող/վարող

1. Գործողության նպատակը

- Պարզել, թե ինչպես կարող է ՀՀ ԱՎԾ-ն վերապատրաստել արտաքին սպառողներին Armstatbank.am-ի գծով
- Պարզել, թե ինչպես կարող է ՀՀ ԱՎԾ-ն կազմակերպել ներքին վերապատրաստում
- Բարելավել ՀՀ ԱՎԾ աշխատակիցների պրեզենտացիոն հմտությունները և հզորացնել նրանց հաղորդակցական կարողությունները

2. Գործողության սպասվող արդյունքը

- Իրականացված վերապատրաստման դասընթացներ
- Առաքելության զեկույց՝ առաքելության ընթացքում կատարած բացահայտումներով

Մասնակիցներ

<u>ՀՀ ԱՎԾ</u>
Բաղադրիչի ղեկավարներ

- Ստեփան Մնացականյան, նախագահ

- Անահիտ Սաֆյան, ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ
- Արաիկ Հայրապետյան, աշխատակազմի ղեկավար
- Նարինե Մուշեղյան, պետ, վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժին
- Գայանե Հարությունյան, պետ, աշխատակազմի կառավարման բաժին

Այլ աշխատակիցներ
- Բոլոր բաժինների պետերը

<u>ԱԵ փորձագետ</u>
Տկն Լոունե Սլյութեր, փորձագետ, Դանիայի վիճակագրություն

Հավելված 2. Առաքելության ծրագիր

Ժամանակ	Վայր	Միջոցառում	Նպատակ/մանրամասն
Երեքշաբթի, կեսօր *(27/6)*	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ԹՄԽ-ի հետ	Քննարկել առաքելության ծրագիրը
Երեքշաբթի, կեսօրից հետո *(27/6)*	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Ներածական մեկնաբանություններ առաքելությանը Ո՞րն է ՀՀ ԱՎԾ տարածման և սպառողների հետ ուղիղ հաղորդակցության կարգավիճակը Քննարկել, թե ինչպես կարող է ՀՀ ԱՎԾ-ն ստեղծել ներքին վերապատրաստման դասընթացների համակարգ (աշխատակիցների կողմից աշխատակիցների վերապատրաստում)
Չորեքշաբթի, առավոտ *(28/6)*	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	<u>Աշխատաժողով.</u> Ինչպես օգտվել Arm-StatBank-ից, վարժություններ <u>Աշխատաժողով</u>. Ինչպես պատրաստել դասընթաց ArmStatBank-ի գծով, ինչ պետք է իմանալ!
Չորեքշաբթի, կոսօրից հետո *(28/6)*	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ Ամփոփիչ հանդիպում ՇԵ ծրագրի ղեկավարի հետ	<u>Աշխատաժողով</u>. Պրեզենտացիոն հմտություններ, ներառյալ powerpoint պրեզենտացիաներ և անձնական ներկայացման ձևը Վերջնական եզրակացությունների քննարկում և առաքելության զեկույց Ճեպազրույց և առաքելության արդյունքների ներկայացում ՇԵ ծրագրի ղեկավարին

Հավելված 3. Անձինք, ում փորձագետը հանդիպել է

<u>ՀՀ ԱՎԾ.</u>

- Ստեփան Մնացականյան, ՀՀ ԱՎԾ նախագահ
- Անահիտ Սաֆյան, ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ
- Արաիկ Հայրապետյան, Աշխատակազմի ղեկավար
- Գայանե Հարությունյան, Աշխատակազմի կառավարման բաժնի պետ
- Նարինե Մուշեղյան, Վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժին
- Գոհար Նշանյան, Վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժին
- Լիլիթ Կարապետյան, Վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժին
- Նելլի Մարգարյան, Վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժին
- Անահիտ Հարությունյան, Առևտրի և այլ ծառայությունների վիճակագրության բաժին
- Հեղինե Բաբայան, Առևտրի և այլ ծառայությունների վիճակագրության բաժին
- Տաթևիկ Հակոբյան, Առևտրի և այլ ծառայությունների վիճակագրության բաժին
- Լուսինե Մարկոսյան, Տնային տնտեսությունների հետազոտությունների բաժին
- Աննա Ամրոյան, Տնային տնտեսությունների հետազոտությունների բաժին
- Արուս Գալստյան, Տնային տնտեսությունների հետազոտությունների բաժին
- Գեորգի Թորոսյան, Տրանսպորտի և կապի վիճակագրության բաժին
- Անահիտ Ներսիսյան, Տրանսպորտի և կապի վիճակագրության բաժին
- Հայկուշ Տիտիզյան, Ֆինանսների վիճակագրության բաժին
- Արսեն Օհանջանով, Ֆինանսների վիճակագրության բաժին
- Լուսինե Ասլանյան, Ֆինանսների վիճակագրության բաժին
- Լիանա Շահբազյան, Ֆինանսների վիճակագրության բաժին
- Կարինե Շահբազյան, Վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժին
- Հռիփսիմե Ջանջարյան, Վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժին
- Արմեն Մարտիրոսյան, Վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժին
- Անժելա Դաշյան, Բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժին
- Նվարդ Գրիգորյան, Բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժին
- Մնացական Խաչատրյան, Բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժին
- Սիրանուշ Զեյնալյան, Աշխատանքի վիճակագրության բաժին
- Սուսան Հունանյան, Աշխատանքի վիճակագրության բաժին
- Ռոզա Միսակյան, Անձնակազմի կառավարման բաժին
- Նաիրա Մանուկյան, Անձնակազմի կառավարման բաժին
- Արմինե Պետրոսյան, Անձնակազմի կառավարման բաժին
- Աննա Կիրակոսյան, Անձնակազմի կառավարման բաժին

- Աննա Կարապետյան, Անձնակազմի կառավարման բաժին
- Արմենուհի Մնացականյան, Անձնակազմի կառավարման բաժին
- Հասմիկ Կարապետյան, Գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժին
- Արմինե Ստեփանյան, Պարենային ապահովության վիճակագրության բաժին
- Աննա Անտոնյան, Պարենային ապահովության վիճակագրության բաժին
- Անի Ալոյան, Ներքին աուդիտի վարչություն
- Գայանե Ղազարյան, Ներքին աուդիտի վարչություն
- Նարինե Աբգարյան, Գյուղատնտեսության վիճակագրության բաժին
- Լուսինե Թումանյան, Գյուղատնտեսության վիճակագրության բաժին
- Հասմիկ Եղիազարյան, Միջազգային վիճակագրական համագործակցության բաժին
- Հասմիկ Սողոմոնյան, Միջազգային վիճակագրական համագործակցության բաժին
- Աննա Նալբանդյան, Միջազգային վիճակագրական համագործակցության բաժին
- Անուշ Խամոյան, Միջազգային վիճակագրական համագործակցության բաժին
- Սուսաննա Խաչատրյան, Մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժին
- Նադեժդա Աստվածատուրովա, Մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժին
- Աիդա Մովսիսյան, Մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժին
- Սիլվա Գարանյան, Մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժին
- Մարինա Պետրոսյան, Շինարարության վիճակագրության բաժին
- Լուսինե Շահինյան, Շինարարության վիճակագրության բաժին
- Աշոտ Անանյան, Արդյունաբերության և էներգետիկայի վիճակագրության բաժին
- Անի Հակոբյան, Արդյունաբերության և էներգետիկայի վիճակագրության բաժին
- Քրիստինե Սիմոնյան, Արդյունաբերության և էներգետիկայի վիճակագրության բաժին
- Արմինե Հակոբյան, Արդյունաբերության և էներգետիկայի վիճակագրության բաժին
- Ռուզաննա Շաբոյան, Որակի կառավարման բաժին
- Արթուր Ամիրխանյան, Որակի կառավարման բաժին
- Անահիտ Գրբոյան, Որակի կառավարման բաժին
- Կարինե Կույումջյան, Մարդահամարի և ժողովրդագրության բաժին
- Աննա Թոխաթյան, Մարդահամարի և ժողովրդագրության բաժին
- Արմինե Ավետիսյան, Մարդահամարի և ժողովրդագրության բաժին
- Ասատուր Վարդանյան, Իրավաբանական բաժին
- Նելլի Բաղդասարյան, Սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժին
- Ալինա Գրիգորյան, Սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժին
- Աննա Հակոբյան, Սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժին

<u>ԹՄԽ թիմ.</u>

- Պիտեր Բոնստեդ Անան Հանսեն, Թվինինգ մշտական խորհրդատու
- Լիանա Աթոյան, ԹՄԽ օգնական
- Անուշ Պողոսյան, թարգմանիչ